ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մարտի 2016 թվականի N 264 - Ն

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հանրային հատվածի կազմակերպությունների հիմնական միջոցների (այսուհետ՝ հիմնական միջոցներ) հաշվեկշռային արժեքը դրանց վերարտադրման գործող պայմաններին և իրական արժեքներին համապատասխանեցնելու, ինչպես նաև «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 4-րդ հոդվածի 1-ին մասի և 14-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների կատարումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել, որ օրենքով սահմանված հանրային հատվածի կազմակերպություններն օրենքի համաձայն սահմանված ժամանակացույցով նախատեսված՝ հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցման տարվա հունվարի 1-ի դրությամբ պարտավոր են՝

1) հաշվապահական հաշվառման նպատակով գույքագրել, վերագնահատել հիմնական միջոցները և դրանց արդյունքներն արտացոլել նոր համակարգին անցնելու տարվա

ֆինանսական հաշվետվություններում: Հիմնական միջոցների գույքագրումն ու վերագնահատումն անցկացնել հաշվապահական հաշվառումը կարգավորող և համակարգող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից օրենքի համաձայն սահմանված իրավական ակտերի պահանջներին համապատասխան.

2) հիմնական միջոցների գույքագրումը և վերագնահատումն ավարտել մինչև հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցման տարվա ապրիլի 1-ը՝ բացառությամբ 2016 թվականի հունվարի 1-ից հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցում կատարող կազմակերպությունների, որոնց համար ավարտման ժամկետ սահմանել մինչև 2016 թվականի հուլիսի 1-ը: Հիմնական միջոցների գույքագրման և դրանց վերագնահատման արդյունքների մասին տեղեկությունները ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված ձևաչափով:

2. Հանրապետական գործադիր մարմինների ղեկավարներին՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ համատեղ մեթոդական, գործնական օգնություն ցույց տալ հանրային հատվածի կազմակերպություններին՝ հաշվապահական հաշվառման նպատակով հիմնական միջոցները գույքագրելու, վերագնահատելու և դրանց արդյունքները ֆինանսական հաշվետվություններում ժամանակին և ճիշտ արտացոլելու համար:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահին՝ հիմնական միջոցները լրիվ և ժամանակին գույքագրելու և (կամ) վերագնահատելու նպատակով, Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպությունների գրավոր պահանջի համաձայն, նրանց տրամադրել նախարարությունում (գերատեսչությունում) առկա այն տեղեկությունն-

ները, որոնք կարող են անհրաժեշտ լինել հիմնական միջոցների գույքագրման, դրանց իրական արժեքով վերագնահատման աշխատանքների կատարումն ապահովելու համար:

4. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2016 թ. մարտի 18
Երևան